© Սույն տեքստը և այն վերահրապարակելու թույլտվությունը տրամադրվել է «ՀՀ արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ Դատարանի տվյալների բազա HUDOC-ում ընդգրկելու համար: [Թարգմանությունն արդեն իսկ հրապարակվել է www.echr.am կայքում]
© The present text and the authorisation to republish it were granted by the "Translation Center of the Ministry of Justice of the Republic of Armenia" SNCO for the purpose of its inclusion in the Court's database HUDOC. [Translation already published in www.echr.am]
© La traduction et l'autorisation de republier ont été accordées par la "Centre de Traduction du Ministère de la Justice d'Armènie" SNCO à son inclusion dans la base de données HUDOC de la Cour. [La traduction déjà publiée sur www.echr.am]

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԱՐԴԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 8001/07)

ՎՃԻՌ

(*արդարացի փոխհատուցում*)

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

25 հուլիսի 2019թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Վարդանյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ *Նախագահ*,

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքը [Tim Eicke],

Յովան Իլեւսկի [Jovan Ilievski],

Ռաֆայել Սաբատո [Raffaele Sabato]՝ *դատավորներ*,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար*,

2019 թվականի հուլիսի 2-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության երեք քաղաքացիներ պրն Յուրի Վարդանյանի (առաջին դիմումատու), տկն Շուշանիկ Նանուշյանի (երկրորդ դիմումատու) եւ պրն Արտաշես Վարդանյանի (երրորդ դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2007 թվականի փետրվարի 19-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 8001/07) հիման վրա:

2. 2016 թվականի հոկտեմբերի 27-ին կայացրած վճռով (հիմնական վճիռ) Դատարանն առաջին դիմումատուի՝ իրավական որոշակիության եւ կողմերի

իրավահավասարության սկզբունքի խախտման եւ անկողմնակալ տրիբունալի կողմից արդար լսումներ չիրականացնելու եւ գույքից զրկելու մասին բողոքները համարել է ընդունելի, իսկ երկրորդ եւ երրորդ դիմումատուների կողմից ներկայացված բողոքները համարել է անընդունելի: Դատարանն այնուհետեւ վճռել է, որ այն հարցի կրկնակի քննությամբ, թե արդյոք առաջին դիմումատուն որոշակի հողակտորի նկատմամբ ուներ իրավունքներ, խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով նախատեսված երաշխիքները: Մասնավորապես, Դատարանը վճռել է, որ առաջին դիմումատուի տան օտարման գործընթացը չի իրականացվել օրենքով սահմանված պայմանների համաձայն՝ խախտելով թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը: Ավելին, Դատարանը վճռել է, որ խախտվել են առաջին դիմումատուի՝ անկողմնակալ տրիբունալի կողմից լսումների իրավունքը եւ կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ դրանով խախտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության երաշխիքները (տե՛ս Վարդանյանը եւ Նանուշյանն ընդդեմ Հայաստանի [Vardanyan and Nanushyan v. Armenia], թիվ 8001/07, 2016 թվականի հոկտեմբերի 27):

3. Առաջին դիմումատուն Կոնվենցիայի 41-րդ հոդվածով պահանջել է իր հողակտորի նկատմամբ ռեստիտուցիա: Որպես այլընտրանք նա պահանջել է 10 381 842.05 եվրո, որը, ենթադրաբար, այն հողակտորի շուկայական արժեքն է, որից նա զրկվել էր: Առաջին դիմումատուն որպես իր օտարված տան արժեքի փոխհատուցում պահանջել է 1 048 097.55 եվրո: Բացի այդ, առաջին դիմումատուն ոչ նյութական վնասի դիմաց պահանջել է 12 000 եվրո:

4. Քանի որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը համապատասխան որոշում կայացնելու համար դեռ պատրաստ չէր, Դատարանն այն հետաձգել էր եւ Կառավարությանն ու առաջին դիմումատուին առաջարկել էր երեք ամսվա ընթացքում ներկայացնել այդ խնդրի վերաբերյալ իրենց գրավոր դիտարկումները եւ, մասնավորապես, Դատարանին տեղեկացնել իրենց միջեւ ձեռք բերված ցանկացած համաձայնության վերաբերյալ (նույն տեղում, § 108, տե՛ս նաեւ եզրափակիչ դրույթների 5-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը):

5. ԵՎ՛ առաջին դիմումատուն, եւ՛ Կառավարությունը ներկայացրել են դիտարկումներ։

6. Հայաստանի կողմից ընտրված դատավոր պրն Արմեն Հարությունյանն ի վիճակի չի եղել մասնակցելու գործի քննությանը (28-րդ կանոն)։ Համապատասխանաբար, Պալատի նախագահը որոշել է Պաուլին Կոսկելոյին նշանակել *ad hoc* (ժամանակավոր) դատավոր (29-րդ կանոնի 2-րդ կետի «բ» ենթակետ)։

ԻՐԱՎՈՒՆՔԸ

7. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»։

Ա. Նյութական վնասը

1. Կողմերի փաստարկները

ա) Առաջին դիմումատուի պահանջները

8. Առաջին դիմումատուն պնդել է տան մասով նյութական վնասի դիմաց 1 048 097.55 եվրոյի վերաբերյալ իր պահանջը։ Նա ներկայացրել է, որ փորձագետները, առկա տվյալների անբավարարության պատճառով, հնարավորություն չեն ունեցել տրամադրելու տան շուկայական արժեքի գնահատում եւ մինչեւ հիմնական վճռի կայացումը հիմնվել են նախկինում իր կողմից բերված փաստարկների վրա։

9. Առաջին դիմումատուն պնդել է, որ տան դիմաց փոխհատուցման

արժեքի գնահատումը պետք է հիմնված լինի տան՝ տվյալ պահին գործող շուկայական արժեքի վրա եւ հաշվարկվի խնդրո առարկա տարածքում նորակառույց շինությունների յուրաքանչյուր քառակուսի մետրի շուկայական արժեքի հիման վրա՝ չհաշված ներպետական վարույթի ընթացքում արդեն տրամադրված 54 494 000 ՀՀ դրամի չափով գումարը (մոտավորապես 100 000 եվրո): Համաձայն առաջին դիմումատուի փաստարկների՝ իր տան շրջակայքում կառուցված շինությունների շուկայական արժեքը միջինում կազմում է 1 600 000 ՀՀ դրամ (մոտավորապես 2 900 եվրո) յուրաքանչյուր քառակուսի մետրի համար: Հետեւաբար, իր տան (տարածքը՝ 395.6 քառակուսի մետր) շուկայական արժեքը կկազմեր 632 960 000 ՀՀ դրամ (մոտավորապես 1 148 000 եվրո): Ներպետական մակարդակում որպես փոխհատուցում տրված գումարը, այն է՝ 54 494 000 ՀՀ դրամի (մոտավորապես 100 000 եվրո) չափով գումարը հանելու արդյունքում կստացվեր պահանջվող գումարը:

10. Ինչ վերաբերում է հողակտորին, ապա առաջին դիմումատուն նշել է, որ համաձայն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ստացված պաշտոնական տեղեկությունների՝ խնդրո առարկա հողն օտարվել է կառուցապատող մասնավոր ընկերության: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ առաջին դիմումատուն համարել է, որ հողի՝ փոխհատուցումը կատարելու ամսաթվի (կամ հնարավոր ամենամոտ ամսաթվի) դրությամբ գործող շուկայական արժեքն ամբողջությամբ իրեն փոխհատուցելը կլիներ փոխհատուցման ամենանպատակահարմար ձեւը: Առաջին դիմումատուն պահանջել է 2 651 332 եվրո:

11. Որպես այդ պահանջի հիմնավորում առաջին դիմումատուն ներկայացրել է 2017 թվականի հունիսի 26-ի ամսաթվով կազմված փորձագիտական գնահատման հաշվետվություն: Հաշվետվության մեջ նշվել է, որ առկա ոչ բավարար տվյալների պատճառով անհնար է եղել որոշել այն շինության շուկայական արժեքը, որը տեղակայված է եղել խնդրո առարկա հողամասի վրա կամ այդ հողի (հաշվի առնելով դրա վրա կատարված բարեփոխումները՝ մասնավորապես ներկայումս դրա վրա գտնվող բազմաբնակարանային

շինության) շուկայական արժեքը: Փորձագետը հիմնվել է միայն երեք «համանման գույքի» համար առաջարկված գների, այսինքն՝ Երեւանի փոքր կենտրոնի երեք հողակտորների համար հայտարարված վաճառքի գնի վրա: Այնուհետեւ նա համապատասխանեցրել է այդ գները, որպեսզի հաշվի առնի համեմատության համար օգտագործված «համանման գույքի» համապատասխան տեղադրությունների եւ խնդրո առարկա հողակտորի միջեւ առկա տարբերությունները: Փորձագետի կողմից այդ համապատասխանեցման կիրառումը հիմնված է եղել այն ենթադրության վրա, որ շուկայական գնի վրա ազդող գործոններից մեկն անշարժ գույքի հեռավորությունն էր Հանրապետության հրապարակից, այսինքն՝ Հանրապետության հրապարակին ավելի մոտ գտնվող հողակտորներն ավելի թանկ էին, իսկ խնդրո առարկա հողակտորը շատ ավելի մոտ էր հրապարակին, քան «համանման գույքը»: Հաշվի առնելով վերոնշյալ չափորոշիչները՝ փորձագետը հողի շուկայական արժեքը 2017 թվականի մայիսի 30-ի դրությամբ, այն է՝ փաստացի գնահատման իրականացման ամսաթվին, գնահատել է ընդհանուր 2 305 506 եվրո: Առաջին դիմումատուն համարել է, որ այս գումարը պետք է ավելացվի 15%-ով, այսինքն 345 826 եվրոյով, որը կազմում է ֆինանսական խրախուսանքի այն չափը, որը նա կունենար, եթե հողն օրինական կերպով օտարվեր:

12. Բացի այդ, առաջին դիմումատուն բաց թողնված եկամտի դիմաց պահանջել է 1 525 514 եվրոյի չափով փոխհատուցում այն հիմքով, որ նա հնարավորություն չի ունեցել իրացնելու իր օրինական իրավունքներն իր հողակտորի նկատմամբ 2007 թվականի մարտի 2-ի դրությամբ՝ հողակտորի նկատմամբ իր իրավունքի առնչությամբ վարույթի շրջանակներում վերջնական որոշում կայացվելու օրվանից (տե՛ս հիմնական վճռի 36-րդ պարբերությունը): Առաջին դիմումատուն պնդել է, որ բաց թողնված եկամտի չափը պետք է հաշվարկվի իր հողի շուկայական արժեքի հիման վրա, ինչպես որ գնահատվել է կառուցապատող մասնավոր ընկերությանն ավելի մեծ հողամաս (որը ներառում էր իր հողակտորը) օտարելու նպատակով Երեւանի քաղաքապետարանի կողմից ընդունված՝ 2013 թվականի դեկտեմբերի 9-ի գնահատման հաշվետվությամբ: Փորձագետը

հաշվարկել է, որ հողի արժեքը կազմում է 543 529 ՀՀ դրամ (մոտավորապես 992 եվրո) յուրաքանչյուր քառակուսի մետրի համար: Այսպիսով, հաշվի առնելով առաջին դիմումատուի հողատարածքի համամասնությունը, դրա շուկայական արժեքը 2013 թվականի դեկտեմբերի 9-ի դրությամբ կկազմեր 1 221 777 եվրո: Առաջին դիմումատուն պնդել է, որ բաց թողնված եկամտի փոխհատուցման չափը պետք է սահմանվի այս գումարի հիման վրա՝ Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից ընդունված բանկի հաշվարկային տոկոսադրույքի կիրառմամբ (որը, ներպետական օրենսդրության համաձայն, կիրառվում է չկատարված կամ հետաձգված վճարման փոխհատուցման հաշվարկի համար): Որպես այլընտրանք առաջին դիմումատուն առաջարկել է բաց թողնված եկամտի չափը հաշվարկել՝ հղում կատարելով բանկային ավանդների միջին տոկոսադրույքին. համաձայն առեւտրային բանկի կողմից թողարկված եւ առաջին դիմումատուի կողմից ներկայացված տեղեկանքի՝ այդ տոկոսադրույքը 2007 եւ 2017 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում կազմել է մոտավորապես 12%:

բ) Կառավարության դիրքորոշումը

13. Կառավարությունը պնդել է, որ 2007 թվականի մարտի 2-ը՝ հողակտորի նկատմամբ առաջին դիմումատուի իրավունքների առնչությամբ վարույթի շրջանակներում վերջնական վճռի կայացման օրը, պետք է համարվի այդ օրվա դրությամբ իրենց պարտավորությունների կատարման օր: Կառավարության տեսանկյունից՝ հողակտորի նկատմամբ իրավունքներից զրկվելու արդյունքում առաջին դիմումատուի կողմից կրած նյութական վնասը պետք է հաշվարկվեր դրա շուկայական արժեքի հիման վրա, մասնավորապես՝ 276 230 000 ՀՀ դրամ (ինչպես հաշվարկված է եղել 2005 թվականի մայիսի 19-ի փորձագիտական հաշվետվության մեջ, տե՛ս հիմնական վճռի 20-րդ պարբերությունը): Այս գումարը 2007 թվականի մարտի 2-ի փոխարժեքով եվրոյի վերածելու դեպքում ընդհանուր պարտավորության գումարը կկազմեր 589 877 08 եվրո: Հաշվի առնելով Դատարանի՝ տոկոսադրույքը Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝

լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի հիման վրա (որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ) հաշվարկելու գործելակերպը, Կառավարությունը տոկոսադրույքն այդ սկզբունքով հաշվարկելը ողջամիտ մոտեցում է համարել: Այսպիսով, 2007 եւ 2017 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածի համար 589 877 08 եվրոյի դեպքում ընդհանուր տոկոսը կկազմեր 304 038 եվրո: Այսպիսով, այս մասով վերջնական փոխհատուցման գումարը կկազմեր 893 915 08 եվրո:

գ) Առաջին դիմումատուի պատասխանը Կառավարության դիտարկումներին

14. Առաջին դիմումատուն վիճարկել է այն եղանակը, որով Կառավարությունն առաջարկել է հաշվարկել հողակտորի եւ բաց թողնված եկամտի առնչությամբ իրեն շնորհման ենթակա փոխհատուցման գումարը: Բացի այդ, Կառավարության փաստարկներում չէր նշվում այն մասին, որ առաջին դիմումատուին շնորհվել է փոխհատուցում անօրինական կերպով նրան տնից կամ նրա կողմից կրած ծախսերի համար փոխհատուցումից զրկելու դիմաց:

15. Մասնավորապես, դիմումատուն վիճարկել է Կառավարության այն տեսակետը, որ հողի շուկայական արժեքը պետք է որոշվի 2005 թվականի մայիսի 19-ի փորձագիտական գնահատման հաշվետվության հիման վրա: Նա պնդել է, որ իրեն որպես փոխհատուցում պետք է շնորհվեր գույքի գործող շուկայական արժեքի չափով գումար՝ իր պահանջներին վերաբերող փաստարկներում նշված լրացուցիչ գումարների հետ միասին: Նա պնդել է տան դիմաց փոխհատուցմանն առնչվող իր պահանջը, որին Կառավարության փաստարկներում ընդհանրապես անդրադարձ չի կատարվել:

16. Ավելին, առաջին դիմումատուն վիճարկել է այն մեթոդը, որով բաց թողնված եկամտի չափը հաշվարկվել է Կառավարության կողմից: Նա համարել է, որ Դատարանի կողմից կիրառված մեթոդը՝ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքի հաշվարկման համար, չէր վերաբերում բաց թողնված եկամտի չափի հաշվարկմանը: Իր պահանջում առաջին դիմումատուն ներկայացրել է իր

կողմից բաց թողնված եկամտի չափի մանրամասն հաշվարկը՝ հողում կատարելով հողի շուկայական արժեքի ամենավերջին գնահատմանը՝ հիմնված 2013 թվականի դեկտեմբերի 9-ի փորձագիտական հաշվետվության վրա (տե՛ս վերեւում՝ 12-րդ պարբերությունը): Թեեւ առաջին դիմումատուն իր ներդրումը չի ունեցել հաշվետվության պատվիրման մեջ, նա համարել է, որ առկա չէ որեւէ հանգամանք, որը կմատնանշեր, որ այդ հաշվետվությունը (որն ընդունվել է Երեւանի քաղաքապետի եւ ավագանու կողմից որպես այն հողատարածքի շուկայական արժեքի համապատասխան գնահատում, որը ներառում էր նաեւ իր հողակտորը) կազմման պահին չի եղել արժանահավատ:

դ) Կառավարության մեկնաբանությունները՝ առաջին դիմումատուի պահանջների վերաբերյալ

17. Կառավարությունը վիճարկել է հողի մասով նյութական վնասի դիմաց փոխհատուցման առնչությամբ իր պահանջի հիմնավորման նպատակով առաջին դիմումատուի կողմից ներկայացված՝ 2017 թվականի հունիսի 26-ի փորձագիտական գնահատման հաշվետվության արժանահավատությունը (տե՛ս վերեւում՝ 11-րդ պարբերությունը): Մասնավորապես, Կառավարությունը կասկածի տակ է դրել փորձագետի մասնագիտական պատրաստվածությունն ու անաչառությունը, ինչպես նաեւ խնդրո առարկա հողակտորի շուկայական արժեքը որոշելիս հաշվետվության մեջ օգտագործված տվյալներն ու մեթոդաբանությունը, որը, նրանց կարծիքով, զգալիորեն գերագնահատված է եղել: Նրանք հարցականի տակ են դրել փորձագետի կողմից Երեւանի կենտրոնում անշարժ գույքի գների համեմատական վերլուծության մեջ օգտագործված «համանման գույքի» համապատասխանությունը եւ մատնանշել են որոշ տվյալների ենթադրյալ անճշտությունը, մասնավորապես փորձագիտական հաշվետվության մեջ նշված «համանման» հողակտորների հեռավորությունը Հանրապետության հրապարակից. դա հանգեցրել է տվյալ հողի արժեքի զգալի գերագնահատման: Ըստ Կառավարության փաստարկների՝ փորձագետի անհիմն ենթադրությունն այն

առնչությամբ, որ անշարժ գույքի հեռավորությունը Հանրապետության հրապարակից որոշիչ գործոն էր դրա շուկայական գնի սահմանման համար, նույնպես իր հերթին խաթարել է գնահատման արդյունքները: Ավելին, այս ենթադրությունը հերքվել է հենց նույն հաշվետվության մեջ, որում փորձագետը տրամադրել է Երեւանի կենտրոնում հողակտորների գնային առաջարկներին վերաբերող տվյալներ:

18. Կառավարությունը համարել է, որ առաջին դիմումատուին հողի մասով նյութական վնասի դիմաց շնորհվող փոխհատուցման գումարի չափը պետք է հաշվարկվի տվյալ ժամանակահատվածում գործող շուկայական արժեքի հիման վրա, ինչպես որ սահմանված է եղել 2005 թվականի մայիսի 19-ի փորձագիտական հաշվետվության մեջ (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը եւ հիմնական վճռի 20-րդ պարբերությունը): Այդ հաշվետվությունը, Կառավարության կարծիքով, տեղեկատվության միակ արժանահավատ եւ վստահելի աղբյուրն էր, որը կարող էր օգտագործվել առաջին դիմումատուի հողակտորի շուկայական արժեքը որոշելու համար:

19. Կառավարությունը վերահաստատել է իր նախնական փաստարկներում արտահայտած դիրքորոշումը հողակտորի դիմաց շնորհվող փոխհատուցման չափը հաշվարկելու եղանակի առնչությամբ (տե՛ս վերեւում՝ 13-րդ պարբերությունը): Կիրառելով հաշվարկի նույն մեթոդը՝ Կառավարությունը համարել է, որ առաջին դիմումատուին այս առնչությամբ վճարվող փոխհատուցման գումարը կազմում է 903 106 66 եվրո:

20. Ինչ վերաբերում է առաջին դիմումատուի՝ տան առնչությամբ ներկայացված պահանջին, ապա Կառավարությունը ներկայացրել է, որ առաջին դիմումատուն ներպետական վարույթի շրջանակներում արդեն ստացել է համապատասխան փոխհատուցում տան օտարման դիմաց: Նրանք համարել են, որ տան դիմաց տրվող փոխհատուցման գումարի չափը հաշվարկելու համար կիրառված մեթոդը (տե՛ս վերեւում՝ 9-րդ պարբերությունը) պատճառաբանված կամ հիմնավորված չի եղել:

21. Այնուհետեւ, Կառավարությունը վիճարկել է ենթադրյալ բաց թողնված եկամտի մասով առաջին դիմումատուի պահանջը: Նրանք արտահայտել են իրենց անհամաձայնությունն այն հարցի վերաբերյալ, որ առաջին դիմումատուն իր ենթադրյալ բաց թողնված եկամտի չափի հաշվարկման համար որպես հիմք է ընդունել 2013 թվականի դեկտեմբերի 9-ի գնահատման հաշվետվությունը՝ պնդելով, որ այդ հաշվետվության մեջ արտացոլված չէ ո՛չ հողի՝ տվյալ ժամանակահատվածում գործող շուկայական արժեքը, ո՛չ ներկայիս արժեքը: Ավելին, գնահատումն իրականացնելու պահին դրա վրա արդեն շինություն է կանգնեցված եղել: Ընդհանուր առմամբ Կառավարությունն առաջին դիմումատուի այս մասով պահանջը համարել է ենթադրական բնույթի եւ պահանջել է Դատարանից մերժել այն ամբողջությամբ:

2. Դատարանի գնահատականը

22. Դատարանը վերահաստատում է, որ վճիռը, որով այն խախտում է արձանագրում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում արձանագրված խախտումը վերացնելու եւ դրա հետեւանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու մասով, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ առկա իրավիճակը (տե՛ս Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Iatridis v. Greece (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, § 32, ՄԻԵԴ 2000-XI): Պայմանավորվող պետությունները, որոնք գործի կողմեր են, սկզբունքորեն ազատ են ընտրելու այն միջոցները, որոնցով կատարելու են այն վճիռը, որով Դատարանը խախտում է հայտնաբերել: Վճռի կատարման եղանակի մասով հայեցողությունն արտացոլում է ընտրություն կատարելու ազատությունը՝ երաշխավորված իրավունքներն ու ազատություններն ապահովելու՝ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունը դասելով Պայմանավորվող պետությունների առաջնային պարտավորությունների շարքին (հոդված 1): Եթե խախտման բնույթը թույլ է տալիս *restitutio in integrum* (մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի հնարավորինս

վերականգնում), ապա պատասխանատվությունը կրող պետությունը պետք է դա ինքն իրականացնի, քանի որ Դատարանը դա անելու ո՛չ լիազորություն ունի եւ ո՛չ էլ գործնական հնարավորություն: Եթե, այնուամենայնիվ, ազգային իրավունքով խախտման հետեւանքների համար հատուցում չի թույլատրվում կամ թույլատրվում է մասնակի հատուցում, ապա 41-րդ հոդվածով Դատարանին շնորհվում է լիազորություն՝ տուժած կողմին տրամադրելու այնպիսի փոխհատուցում, որն այն նպատակահարմար է համարում (տե՛ս Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Brumărescu v. Romania (just satisfaction) [GC]], թիվ 28342/95, § 20, ՄԻԵԴ 2001-I):

23. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով Դատարանի կողմից տրամադրվող արդարացի փոխհատուցման բնույթն ու ծավալն անմիջականորեն կապված են խախտման բնույթի հետ (տե՛ս «Շեստի Մայ Ինջինիրինգ ՕՕԴ»-ն եւ այլք ընդդեմ Բուլղարիայի [*Shesti Mai Engineering OOD and Others v. Bulgaria*], թիվ 17854/04, § 101, 2011 թվականի սեպտեմբերի 20):

24. Վարույթում գտնվող գործի առնչությամբ Դատարանն իր հիմնական վճռում առաջին դիմումատուի՝ իր տնից եւ հողակտորից զրկվելու մասով բողոքների վերաբերյալ երկու տարբեր եզրահանգումներ է կայացրել:

25. Մասնավորապես, Դատարանը տան առնչությամբ գտել է, որ դրա օտարումը չի իրականացվել օրենքով սահմանված պայմաններին համապատասխան եւ հետեւաբար իրականացվել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտմամբ: Այդպիսով, Դատարանը հղում է կատարել Հայաստանի դեմ բերված բազմաթիվ գործերում համանման բողոքների առնչությամբ իր նախկին եզրահանգումներին (տե՛ս հիմնական վճռի 99-րդ եւ 100-րդ պարբերությունները, տե՛ս նաեւ Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի [Minasyan and Semerjyan v. Armenia], թիվ 27651/05, §§ 69-77, 2009 թվականի հունիսի 23 եւ Թունյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի [Tunyan and Others v. Armenia], թիվ 22812/05, §§ 35-39, 2012 թվականի հոկտեմբերի 9):

Ինչ վերաբերում է առաջին դիմումատուի՝ հողից զրկվելու փաստին՝

Դատարանը գտել է, որ մեկ այլ վարույթում հարցի (թե արդյոք առաջին դիմումատուն իրավունքներ ուներ հողի նկատմամբ) կրկնակի քննությունը հակասում էր իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ դրանով անտեսվել է Գերագույն դատարանի նախագահության 1997 թվականի սեպտեմբերի 22-ի որոշման վերջնական բնույթը (անփոփոխ է թողնվել Վճռաբեկ դատարանի լիակազմ նստաշրջանում 1998 թվականի դեկտեմբերի 29-ին կայացված որոշմամբ): Ուստի, դիմումատուի՝ խնդրո առարկա հողից զրկվելու մասով պահանջն անօրինական է եղել Կոնվենցիայի իմաստով եւ հակասել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին եւ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին (տե՛ս հիմնական վճռի 68-71-րդ եւ 96-րդ պարբերությունները):

26. Դատարանը նկատում է, որ խնդրո առարկա գույքը Երեւանում շատ կենտրոնական դիրք զբաղեցնող՝ ընդհանուր 1 385,6 քառ. մետր տարածքով հողակտորի վրա գտնվող 395,6 քառ. մետր ընդհանուր տարածքով տուն է, որի մասով լիարժեք սեփականության իրավունքով 1 208,5 քառ. մետր տարածքը եւ բաժնային սեփականության իրավունքով 177,1 քառ. մետր տարածքը պատկանել են առաջին դիմումատուին:

27. Դատարանը նշում է, որ գույքի ռեստիտուցիան անհնար է այն փաստի պատճառով, որ տունը քանդվել է (տե՛ս հիմնական վճռի 51-րդ պարբերությունը), իսկ հողակտորն օտարվել է երրորդ կողմի (տե՛ս վերեւում՝ 10-րդ պարբերությունը): Հետեւաբար, Դատարանը համարում է, որ պետք է տրամադրվի նյութական վնասի մասով փոխհատուցում:

28. Ինչ վերաբերում է տանը, ապա Դատարանը նշում է, որ նախկինում տրամադրել է նյութական վնասի փոխհատուցում համանման իրավիճակում (տե՛ս Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի (արդարացի փոխհատուցում), թիվ 27651/05, §§ 17-21, 2011 թվականի հունիսի 7), որը, ըստ Դատարանի, միանգամայն կիրառելի է սույն գործում այնքանով, որքանով այն վերաբերում է առաջին դիմումատուի կողմից իր տան կորստի դիմաց փոխհատուցման հարցին: Կիրառելով միեւնույն մոտեցումը եւ տալով

գնահատական իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերի հիման վրա՝ Դատարանը տան կորստի արդյունքում կրած նյութական վնասը գնահատում է 102 000 եվրո:

29. Ինչ վերաբերում է հողին, ապա Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ի մասի եւ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտման արդյունքում կրած նյութական վնասը որոշելիս, դիմումատուի օգտին վերջնական դատական որոշման հետաձգման հետ կապված (ի հակադրություն *res judicata* սկզբունքի) Դատարանի ավանդական մոտեցումն է եղել կարգադրել i) *restitutio in integrum* (մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի հնարավորինս վերականգնում) կամ (եթե ապացուցվել է *restitutio in integrum*-ի անհնարինությունը) ii) գույքի՝ այն պահի դրությամբ գործող արժեքի չափով գումարի վճարում, երբ Դատարանը ընդունում է իր որոշումը (տե՛ս վերեւում հիշատակված՝ *Բրումարեսկոյի* գործը, §§ 22 եւ 23 եւ *Քեհայան եւ այլք ընդդեմ Բուլղարիայի* (արդարացի փոխհատուցում) [Kehaya and Others v. Bulgaria (just satisfaction)], թիվ 47797/99 եւ թիվ 68698/01, §§ 20-22, 2007 թվականի հունիսի 14): Այդ մոտեցումն ընդունվել է նաեւ ընդդեմ Հայաստանի մեկ այլ գործում, որում բարձրացվել է նման հարցեր, որի շրջանակում Դատարանը կարգադրել է կատարել գույքի գործող արժեքի չափով գումարի վճարում՝ որպես նյութական վնասի փոխհատուցում (տե՛ս *Սիմոնյանն ընդդեմ Հայաստանի* [Simonyan v. Armenia], թիվ 18275/08, §§ 30 եւ 31, 2016 թվականի ապրիլի 7):

30. Այնուամենայնիվ, Դատարանն այն կարծիքին է, որ սույն գործին բնորոշ առանձնահատկություններն աննպատակահարմար են դարձնում վերոնշյալ նախադեպային իրավունքով սահմանված սկզբունքների կիրառումը՝ հետեւյալ պատճառներով:

Նախեւառաջ, առաջին դիմումատուն խնդրո առարկա հողի նկատմամբ սեփականության իրավունքը կորցրել էր որոշակի վարույթներում հարցի (թե արդյոք նա իրավունքներ ուներ հողի նկատմամբ) կրկնակի քննության

արդյունքում, չնայած որ այդ հարցն արդեն որոշվել էր վերջնական եւ պարտադիր դատական որոշումներով (տե՛ս հիմնական վճռի 96-րդ պարբերությունը): Հետեւաբար, այս փաստով բացառվում է նշված հողի օտարումը դեպքերի բնականոն զարգացման ընթացքում: Այսինքն՝ առաջին դիմումատուն կորցրել է հողի նկատմամբ սեփականության իրավունքը՝ առանց փոխհատուցման որեւէ վճարի՝ ի տարբերություն տան, որն օտարվել էր՝ չնայած այն հանգամանքին, որ Դատարանի կողմից այդ գործընթացը ճանաչվել էր Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների խախտում (տե՛ս հիմնական վճռի 99-րդ եւ 100-րդ պարբերությունները):

Երկրորդ, մինչեւ իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի հնարավորինս վերականգնումը *(restitutio in integrum)*, որը խախտման արդյունքում կրած նյութական վնասի փոխհատուցման հիմնական միջոցն էր, արդեն 2013 թվականին առաջին դիմումատուի համար անհնար էր դարձել, երբ խնդրո առարկա հողակտորը, հարեւանությամբ գտնվող այլ հողամասերի հետ միասին, օտարվել էր կառուցապատող ընկերության (տե՛ս վերեւում՝ 12-րդ պարբերությունը):

31. Այս հանգամանքներում, ընդունելով, որ առաջին դիմումատուն իրավունք ունի ստանալու հողի ամբողջական արժեքի չափով գումարը, Դատարանը համարում է, որ նյութական վնասը գնահատելիս պետք է հաշվի առնել ոչ թե Դատարանի վճռի հրապարակման ամսաթիվը, այլ այն ամսաթիվը, երբ նա կորցրել է հողի նկատմամբ սեփականության իրավունքը (տե՛ս Գիզո-Գալիսեյն ընդդեմ Իտալիայի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Guiso-Gallisay v. Italy (just satisfaction) [GC]], թիվ 58858/00, § 103, 2009 թվականի դեկտեմբերի 22):

32. Այս համատեքստում Դատարանը որոշում է մերժել առաջին դիմումատուի պահանջներն այնքանով, որքանով դրանք հիմնված են Դատարանի վճռի կայացման օրվա դրությամբ գործող հողի արժեքի վրա, եւ փոխհատուցման չափը սահմանել՝ հողում կատարելով հողի՝ այն պահի դրությամբ գործող շուկայական արժեքին, երբ առաջին դիմումատուն կորցրել է այդ հողի նկատմամբ

սեփականության իրավունքը: Հետեւաբար, սույն գործով հղման ամսաթիվը պետք է լինի 2007 թվականի մարտի 2-ը՝ այն օրը, երբ Վճռաբեկ դատարանը մերժել է թույլտվություն տալ առաջին դիմումատուին բողոքարկելու Վերաքննիչ դատարանի՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ի վճիռը (տե՛ս հիմնական վճռի 35-րդ եւ 36-րդ պարբերությունները):

33. Այդուհանդերձ, Դատարանը նշում է, որ, ցավոք, կողմերը չեն տրամադրել վստահելի հիմնավորում խնդրո առարկա հողի շուկայական արժեքի գնահատման համար այն պահի դրությամբ, երբ առաջին դիմումատուն զրկվել է վերջինից:

Արդյունքում, տարբեր ժամանակներում հողի շուկայական արժեքի վերաբերյալ Դատարանն իր տրամադրության տակ ունի միայն հետեւյալ տվյալները՝ 2005 թվականի մայիսի 19-ի գնահատման հաշվետվությունը, որին հղում է կատարել Կառավարությունը (տե՛ս վերեւում՝ 13-րդ եւ 18-րդ պարբերությունները), Երեւանի քաղաքապետարանի կողմից ընդունված 2013 թվականի դեկտեմբերի 9-ի գնահատման հաշվետվությունը (տե՛ս վերեւում՝ 12-րդ պարբերությունը) եւ առաջին դիմումատուի հանձնարարությամբ իրականացված եւ իր պահանջների հիմնավորման նպատակով իր կողմից ներկայացված՝ 2017 թվականի հունիսի 26-ի փորձագիտական հաշվետվությունը (տե՛ս վերեւում՝ 11-րդ պարբերությունը):

34. Ինչ վերաբերում է մասնավորապես 2005 թվականի մայիսի 19-ի գնահատման հաշվետվությանը՝ չհաշված այն փաստը, որ համապատասխան գնահատումը հանձնարարվել է ձեռք բերողի կողմից եւ իրականացվել է հղման ամսաթվից գրեթե երկու տարի առաջ (տե՛ս հիմնական վճռի 20-րդ պարբերությունը), այդ հաշվետվության մեջ նշված շուկայական արժեքը ներպետական դատարանների կողմից երբեք քննության չի առնվել, ավելին, չի ընդունվել պարզապես այն պատճառով, որ, ինչպես նշվեց վերեւում, խնդրո առարկա հողի առնչությամբ երբեւէ օտարման ոչ մի վարույթ չի հարուցվել: Այսպիսով, Դատարանը ոչ մի հիմնավորում չի տեսնում իր գնահատումն իրականացնելիս 2005 թվականի մայիսի 19-ի գնահատման հաշվետվությունը

հաշվի առնելու համար:

35. Բացի այդ, Դատարանը գտնում է, որ առաջին դիմումատուի կողմից ներկայացված՝ 2017 թվականի հունիսի 26-ի փորձագիտական հաշվետվությունը նույնպես չի կարող ընդունվել որպես ամբողջությամբ վստահելի: Նախեւառաջ, իր համեմատական վերլուծության մեջ փորձագետն օգտագործել է այնպիսի գույքի գնային առաջարկները, որը նա համարել է «համանման» անշարժ գույք՝ ի հակադրություն նույն տարածքում ընդգրկված հողի փաստացի գործարքներով վճարված գների (տե՛ս վերեւում՝ 11-րդ պարբերությունը): Երկրորդ, ինչպես նշվել է Կառավարության կողմից, փորձագետը Հանրապետության հրապարակից հեռավորությունը համարել է կարեւոր ազդեցիկ գործոն շուկայական արժեքը որոշելու համար եւ փորձագետը կիրառել է համապատասխան հարմարեցումը խնդրո առարկա հողի՝ Հանրապետության հրապարակին մոտ գտնվելու հանգամանքը հաշվի առնելու նպատակով: Այնուամենայնիվ, համաձայն հաշվետվության մեջ առկա՝ քաղաքի կենտրոնում գտնվող հողակտորների գնային առաջարկները ներկայացնող աղյուսակների՝ եղել են հողակտորներ, որոնց գնային առաջարկներն ավելի բարձր են եղել, քան այն հողակտորներինը, որոնք ավելի մոտ են եղել Հանրապետության հրապարակին: Վերջապես, հաշվի առնելով անշարժ գույքի հայկական շուկայի միտումները 2013 եւ 2017 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում, մեծապես անհավանական, եթե ոչ անհնար է թվում այն, որ խնդրո առարկա հողի շուկայական արժեքը չորս տարուց էլ պակաս ժամանակահատվածում կարող էր ավելանալ գրեթե 90%-ով՝ հաշվի առնելով 2013 թվականի դեկտեմբերի 9-ի փորձագիտական հաշվետվության մեջ նշված հողի շուկայական արժեքը (տե՛ս վերեւում՝ 12-րդ պարբերությունը), որի արժանահավատությունը կողմերից որեւէ մեկը չի վիճարկել: Ավելին, առաջին դիմումատուն հիմնվել է հենց այդ հաշվետվության վրա՝ բաց թողնված եկամտի առնչությամբ իր պահանջը հիմնավորելու նպատակով (տե՛ս վերեւում՝ 16-րդ պարբերությունը):

36. Նման հանգամանքներում Դատարանը նպատակահարմար է գտնում իր գնահատման համար որպես հիմք ընդունել հողի չվիճարկված շուկայական

արժեքը, որն արտացոլված է 2013 թվականի դեկտեմբերի 9-ի փորձագիտական հաշվետվության մեջ: Այս մասով Դատարանի եզրահանգումը հետագայում հաստատվել է այն փաստով, որ հենց 2013 թվականին է գույքի ռեստիտուցիայի այլընտրանքն անհնար դարձել առաջին դիմումատուի համար:

37. Համաձայն 2013 թվականի դեկտեմբերի 9-ի հաշվետվության՝ առաջին դիմումատուի հողի շուկայական արժեքը կկազմեր 1 221 777 եվրո: Դատարանը ոչ մի հիմնավորում չի տեսնում այս գումարը 15%-ով բարձրացնելու համար, ինչպես առաջարկվել էր առաջին դիմումատուի կողմից (տե՛ս վերեւում՝ 11-րդ պարբերությունը): Մյուս կողմից, այս գումարը պետք է փոխարկվի գործող արժեքով՝ հակակշռելու գնաճի ունեցած ազդեցությունը (տե՛ս, mutatis mutandis (համապատասխան փոփոխություններով), վերեւում հիշատակված՝ *Մինասյանի եւ Սեմերջյանի* գործը, § 20):

38. Վերջապես, այնքանով, որքանով այս պահանջը վերաբերում է առաջին դիմումատուին՝ նրա տան կորստի դիմաց տրվող փոխհատուցմանը, այն հիմնված է եղել ընդհանուր տոկոսադրույքի վրա, որը հաշվարկվել է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից հողի շուկայական արժեքի մասով ընդունված բանկի հաշվարկային տոկոսադրույքի հիման վրա, ինչպես նշված է 2013 թվականի դեկտեմբերի 9-ի գնահատման հաշվետվության մեջ: Որպես այլընտրանք առաջին դիմումատուն առաջարկել է հաշվի առնել բանկային ավանդների միջին տոկոսադրույքը (տե՛ս վերեւում՝ 12-րդ պարբերությունը):

39. Ինչ վերաբերում է տոկոսադրույքը Հայաստանի կենտրոնական բանկի կողմից հողի շուկայական արժեքի մասով 2013 թվականին ընդունված բանկի հաշվարկային տոկոսադրույքը հաշվի առնելով հաշվարկելուն, ապա Դատարանը, նախեւառաջ, նկատում է, որ այն սահմանափակված չէ վնասների հաշվարկման համար կիրառվող ներպետական իրավական դրույթներով: Երկրորդ, Դատարանը համաձայն է Կառավարության այն մոտեցման հետ, որով այն վիճարկում է առաջին դիմումատուի՝ բաց թողնված եկամտի չափի հաշվարկը հողի այն արժեքի հիման վրա, որը սահմանված է 2013 թվականի գնահատման հաշվետվության մեջ:

40. Ինչ վերաբերում է առաջին դիմումատուի՝ տոկոսադրույքը բանկային

ավանդների միջին տոկոսադրույքի հիման վրա հաշվարկելու առաջարկին, ապա Դատարանը նշում է, որ սույն գործով խնդրո առարկա գույքը հողակտոր է, որն առաջին դիմումատուն եւ նրա ընտանիքն օգտագործել են իրենց բնակության նպատակով: Այնուհետեւ Դատարանը նշում է, որ եթե առաջին դիմումատուն ողջամիտ ժամկետներում ստացած լիներ համապատասխան փոխհատուցումը, նա կկարողանար եկամուտ ստանալ այդ միջոցներից, օրինակ՝ դրանք ավանդի տեսքով դնելով բանկում: Հաշվի առնելով այն փաստը, որ Դատարանն արդեն ընդունել է, որ գույքի արժեքի վրա հիմնված փոխհատուցման գումարի չափը պետք է փոփոխվի՝ ըստ գնաճի, Դատարանը ողջամիտ է համարում կատարել լրացուցիչ փոփոխություններ հատուցման առնչությամբ՝ իրական տոկոսային եկամտի որոշակի կորուստը հատուցելու նպատակով: Առաջնորդվելով հայեցողական սկզբունքով՝ Դատարանը, այդպիսով, ողջամիտ է համարում առաջին դիմումատուին շնորհել 1 500 000 եվրո՝ նրա հողակտորից զրկելու արդյունքում կրած նյութական վնասի առնչությամբ:

41. Ելնելով վերոնշյալից՝ Դատարանը համարում է, որ առաջին դիմումատուի՝ բաց թողնված եկամտի փոխհատուցման մասով պահանջը ենթադրյալ բնույթի է եւ այդ իսկ պատճառով պետք է ամբողջությամբ մերժվի:

42. Այսպիսով, նյութական վնասի վերջնական հատուցման չափը 1 602 000 եվրո է:

Բ. Ոչ նյութական վնասը

43. Կառավարությունն առաջարկել է 2 000 000 ՀՀ դրամի (3 500 եվրո) չափով գումարի վճարում՝ հիմնարար եւ Կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտումների արդյունքում կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման մասով՝ Քաղաքացիական օրենսգրքի դրույթներին համապատասխան եւ հաշվի առնելով այս առնչությամբ համանման գործերով Դատարանի կողմից սահմանված նախկին հատուցումները:

44. Առաջին դիմումատուն ոչ նյութական վնասի դիմաց արդարացի փոխհատուցման հարցը թողել է Դատարանի հայեցողությանը: Միեւնույն ժամանակ նա դժվարանում է հասկանալ Կառավարության առաջարկության

հիմքում ընկած պատճառաբանությունը՝ ոչ նյութական վնասի հնարավոր հատուցումը համապատասխան ներպետական քաղաքացիաիրավական դրույթների հիման վրա հաշվարկելու առնչությամբ:

45. Դատարանը համարում է, որ այդքան երկար ժամանակ կրած անզորության եւ հիասթափության զգացումը, որն առաջացել է իր ունեցվածքից ապօրինաբար զրկված լինելու պատճառով, առաջին դիմումատուին հասցրել է ոչ նյութական վնաս, որը պետք է փոխհատուցվի պատշաճ կերպով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով, Դատարանը վճռում է այս մասով առաջին դիմումատուին շնորհել 6 000 եվրո:

Գ. Ծախսերը եւ ծախքերը

46. Առաջին դիմումատուն պահանջել է փոխհատուցում հողակտորին առնչվող նյութական վնասի մասով իր պահանջը հիմնավորելու համար ներկայացված գնահատման հաշվետվության ծախսերի դիմաց: Նա ներկայացրել է հաշիվ ապրանքագիր՝ ապացուցելով, որ իր որդին՝ երրորդ դիմումատուն, վճարել է 380 000 ռուսական ռուբլի (5 700 եվրո) իր գույքի շուկայական արժեքի մասով փորձագիտական եզրակացության համար (տե՛ս վերեւում՝ 11-րդ պարբերությունը):

47. Կառավարությունն այս պահանջը համարել է չափազանցված:

48. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ:

49. Ինչպես նշվեց վերեւում, փորձագետի հաշվետվության հաշիվ ապրանքագիրը ներկայացվել է առաջին դիմումատուի որդուն՝ երրորդ դիմումատուին: Այսպիսով, չի ապացուցվել, որ առաջին դիմումատուն ինքն է կրել պահանջվող ծախսերը (տե՛ս Վոսկյոյլն ընդդեմ Նիդերլանդների, թիվ 64752/01, § 92, 2007 թվականի նոյեմբերի 22): Միեւնույն ժամանակ Դատարանը նկատում է, որ

երրորդ դիմումատուի պահանջները հիմնական վճռում Դատարանի կողմից անընդունելի են ճանաչվել (տե՛ս հիմնական վճռի 103-րդ եւ 104-րդ պարբերությունները)։ Եվ քանի որ այդպես է, Դատարանը մերժում է այս մասով պահանջը։

Դ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

50. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ։

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Վճռում է, որ* ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է առաջին դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) նյութական վնասի դիմաց՝ 1 602 000 եվրո (մեկ միլիոն վեց հարյուր երկու հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

ii) ոչ նյութական վնասի դիմաց՝ 6 000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

2. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը։

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի հուլիսի 25-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի։

Աբել Կամպոս	Քսենյա Տուրկովիչ
Քարտուղար	Նախագահ